Հաստատված է
«Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» ՀԿ
խորհրդի 17/09/2019թ-ի թիվ 19/01Լ որոշմամբ

Սույն պայմանները խմբագրվել է «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» ՀԿ
խորհրդի՝ 30/01/2020թ-ի թիվ 03-20Լ, 15/01/2021թ-ի թիվ 01Լ, 15/04/2021թ-ի թիվ 02-21Լ, 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ, 31/03/2022թ-ի թիվ 02-22Լ, 27/01/2023թ-ի թիվ 01-23Լ, 29/02/2024թ-ի թիվ 01-24Լ, 17/04/2024թ-ի թիվ 03-24Լ, 14/03/2025թ-ի թիվ 02-25Լ, 26/01/2026թ.թիվ 01-26Լ և 05/03/2026թ. թիվ 02-26Լ որոշումներով

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն և հանդիսանում են Գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը:

1.2. Սույն պայմաններով սահմանված ապահովագրությունը համապատասխանում է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված դասերին՝

- Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք հասցվել են գույքին (բացառությամբ գույքի այն տեսակների, որոնք ներառված են Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-7-րդ կետերով սահմանված դասերում) հետևյալ պատահարների հետևանքով՝ ա) հրդեհ, բ) պայթյուն, գ) երկրաշարժ, դ) փոթորիկ, ե) միջուկային վարակ, վնասվածք և այլն, զ) հողի սողանք:
- Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք հասցվել են գույքին (բացառությամբ այն գույքի, որը ներառված է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-7-րդ կետերով սահմանված դասերում) հետևյալ պատահարների արդյունքում և նշված չեն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով սահմանված դասում՝ ա) կարկտահարություն, բ) ցրտահարություն, գ) երաշտ, դ) համաճարակ, կարանտին հիվանդություն, ե) սելավ, ջրհեղեղ, զ) բնական ու տեխնածին բնույթի այլ աղետներ, վթարներ ու պատահարներ, ներառյալ՝ գույքի հափշտակությունը:

1.3. Սույն ապահովագրության պայմանները պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար (այսուհետ՝ նաև Պայմանագրի կողմեր):

ԲԱԺԻՆ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրող՝ ապահովագրական ընկերություն, որն ունի Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված ապահովագրության դասերի լիցենզիա և անդամակցում է «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» հասարակական կազմակերպությանը:

Ապահովադիր՝ ապահովագրողի հետ գյուղատնտեսության ապահովագրության պայմանագիր կնքած անձ, որն օրինական կերպով տիրապետում (վարձակալում) և /կամ շահագործում է ապահովագրության ենթակա պտղատու այգին, դաշտը, հողատարածքը (այսուհետ՝ հողատարածք):

Շահառու՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

Գործակալություն՝ «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» հասարակական կազմակերպություն:

Ապահովագրության օբյեկտ՝ հողատարածքի բերքի՝ Պայմանագրով նախատեսված պատահարների հետևանքով վնասման հետ կապված Ապահովադրի գույքային շահերը:

Ապահովագրվող բերք՝ Պայմանագրում նշված բերք՝ ծիրան, խաղող, դեղձ, խնձոր, աշնանացան և/կամ գարնանացան հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի, վարսակ), կարտոֆիլ, սալոր, ձմերուկ, սեխ, բալ, կեռաս որն աճեցվում է Ապահովադրի/Շահառուի կողմից:

Ապահովագրական պատահար՝ երաշտի, գարնանային ցրտահարության, կարկտահարության և/կամ բնական աղետների (գործոնների) պատճառով առաջացած հրդեհի հետևանքով Պայմանագրում նշված հողատարածքում աճեցվող ապահովագրվող բերքի մասնակի կամ ամբողջական կորուստը և/կամ վնասումն է:

Չհատուցվող գումար՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը:

Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար:

Վնաս գնահատող՝ ապահովագրված բերքին հասցված վնասի գնահատումն իրականացնող փորձագետ, որը որակավորվել է Գործակալության կողմից և որի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է Գործակալության պաշտոնական կայքում:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ համարվում են Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված Պայմանագրով նախատեսված պատահարների հետևանքով ապահովագրված բերքի վնասման և/կամ կորստի հետ:

3.2. Սույն պայմաններով նշված բերքի ապահովագրությունն ըստ ռիսկի տեսակի իրականացվում է և Պայմանագիրը տարածվում է.

3.2.1. կարկտահարության և հրդեհի ռիսկից ծիրանի, խաղողի, դեղձի, հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության դեպքում՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի և Շիրակի մարզերում գտնվող հողատարածքների վրա,

3.2.2. կարկտահարության ռիսկից խնձորի, սալորի, կարտոֆիլի, բալի, կեռասի, հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության դեպքում՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի և Շիրակի մարզերում գտնվող հողատարածքների վրա, իսկ ձմերուկի և սեխի ապահովագրության դեպքում՝ Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում գտնվող հողատարածքների վրա,

3.2.3. գարնանային ցրտահարության ռիսկից ծիրանի, խաղողի, դեղձի, սալորի, կարտոֆիլի ապահովագրության դեպքում՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի և Շիրակի մարզերում գտնվող հողատարածքների վրա,

3.2.4. երաշտի ռիսկից հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության դեպքում՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի և Շիրակի մարզերում գտնվող չոռոգվող հողատարածքների վրա:

Ըստ հողատարածքի գտնվելու վայրի, սույն պայմաններին կից Հավելված 4-ի համաձայն, որոշվում է տվյալ հողատարածքի ռիսկային գոտին և հարաբերականության ցուցանիշը:

3.3. Պայմանագիրը տարածվում է և սույն պայմաններով ապահովագրությունն իրականացվում է այն հողատարածքների վրա, որոնց ծիրանի ծառերը՝ 4-30, խնձորի ծառերը՝ 4-40, բալի, կեռասի ծառերը՝ 4-25, սալորի ծառերը՝ 3-20, դեղձի ծառերը 4-15 տարեկան են, իսկ խաղողինը՝ 4 տարեկանից ավելի, եթե սույն պայմաններով այլ բան նախատեսված չէ:

3.4. Պայմանագրով և սույն պայմաններով ապահովագրության ենթակա չեն այն հողատարածքները, որոնց ծառերը բերք չեն տվել Պայմանագիրը կնքելուն նախորդող երկու տարվա ընթացքում, կամ որտեղ վերջին երկու տարվա ընթացքում անընդմեջ տեղի է ունեցել կարկտահարություն, հրդեհ, գարնանային կամ ձմեռային ցրտահարություն, երաշտ, որոնց հետևանքով տեղի է ունեցել կորուստ նվազագույնը 80%-ի չափով:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

4.1. Ապահովագրության տարածք է համարվում հողամասի սեփականության վկայականի կամ վարձակալության պայմանագրի կամ այլ իրավական փաստաթղթերի համաձայն՝ Պայմանագրում նշված հողատարածքը: Ընդ որում՝ մեկ Պայմանագրով ապահովագրվում է մեկ հողատարածք:

4.2. Ապահովագրության տարածքը սահմանվում է Պայմանագրում նշված հողատարածքի գտնվելու վայրով:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

5.1. Սույն պայմանների համաձայն՝ ապահովագրական ռիսկ է համարվում ենթադրվող պատահարը, որի տեղի ունենալու համար կնքվում է Պայմանագիր:

5.2. Ապահովագրական պատահար համարվում է տեղի ունեցած իրադարձությունը, որը նախատեսված է սույն պայմաններով և Պայմանագրով և որի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Շահառուին) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում իրականացնելու պարտավորություն է առաջանում: Եթե տվյալ պատահարն առաջացել է պարբերական պատահարների հետևանքով, և որի հիմնական պատճառը Պայմանագրով ապահովագրված է, ապա տվյալ պատահարը համարվում է ապահովագրական պատահար՝ անկախ այն փաստից, թե մյուս պատահարներն ապահովագրված են, թե՝ ոչ:

5.3. Սույն պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահար համարվում է Ապահովադրի գույքային շահերին հասցված իրական վնասը՝ ապահովագրված օբյեկտի վնասի և/կամ ամբողջական կորստի արդյունքում, որն առաջացել է հետևյալ ապահովագրական ռիսկերի կամ դրանց համակցությունների ուղղակի ազդեցության հետևանքով.

5.3.1. **Գարնանային ցրտահարություն՝** սառեցման կետից ցածր ջերմաստիճանի պատճառով ծառերի և մշակաբույսերի հատվածների հյուսվածքների՝ բողբոջների, ծաղիկների, փոքր պտուղների սառեցում: Սույն պայմանների համաձայն՝ գարնանային ցրտահարության ռիսկը վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ բույսերը ձմեռային հանգստից հետո վերականգնում են իրենց վեգետացիան:

5.3.2. **Կարկտահարություն՝** սովորաբար անձրևի և/կամ քամու հետ ուղեկցվող գնդաձև սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղումներ, որոնք կարող են մեխանիկական վնաս հասցնել ծառերի և մշակաբույսերի հատվածների հյուսվածքներին (բողբոջներ, տերևներ, ծաղիկներ, պտուղներ, հատիկներ, ցողուններ, ճյուղեր) և հանգեցնել բերքատվության կրճատմանը:

5.3.3. **Հրդեհ՝ անվերահսկելի բռնկում և այրում,** որն առաջանում է բնական գործոնների պատճառով՝ ներառյալ բարձր ջերմաստիճանը, կայծակի հարվածը: Սույն պայմանների համաձայն՝ հրդեհի ռիսկը վերաբերում է բողբոջների, ծաղիկների, պտուղների վնասմանը հրդեհի հետևանքով (ծուխ, մուր), ինչպես նաև՝ հրդեհը մարելու միջոցառումների իրականացման ժամանակ ապահովագրված բերքին հասցված վնասը և չի վերաբերում որթատունկի և ծառերի վնասմանը:

5.3.4. **Երաշտ՝ տեղումների արդյունավետ քանակի բացակայությունն օդի բարձր ջերմաստիճանի պայմաններում:** Օդերևութաբանական երաշտ է դիտվում այն դեպքում, երբ բույսերի վեգետացիոն ժամանակահատվածում արդյունավետ քանակի տեղումներ (5մմ և ավելի տեղումների քանակը մեկ օրվա ընթացքում) չեն դիտվում 30 օր և ավել տևողությամբ, միևնույն ժամանակ, մինչև 1700մ բարձրության գոտիներում օդի առավելագույն ջերմաստիճանները գերազանցում են 30°C-ը, իսկ 1700մ և ավել բարձրության գոտիներում՝ 25°C-ը:

5.4. Ծիրանի, խաղողի և դեղձի ապահովագրության դեպքում Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես «կարկտահարություն և հրդեհ» կամ «գարնանային ցրտահարություն» ռիսկերի գծով առանձին, այնպես էլ դրանց համակցմամբ:

5.5. Սալորի, կարտոֆիլի ապահովագրության դեպքում Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես «կարկտահարություն» կամ «գարնանային ցրտահարություն» ռիսկերի գծով առանձին, այնպես էլ դրանց համակցմամբ:

5.6. ***Ուժը կորցրել է խորհրդի 14/03/2025թ-ի թիվ 02-25Լ որոշմամբ:***

5.7. Հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության դեպքում Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես «կարկտահարություն», «կարկտահարություն և հրդեհ», «երաշտ» ռիսկերի գծով (չոռոգվող դաշտերի համար) առանձին, այնպես էլ դրանց համակցմամբ:

ԲԱԺԻՆ 6. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման ենթակա չէ այն վնասը, որն առաջացել է Պայմանագրում չնշված ցանկացած ռիսկի հետևանքով, այդ թվում՝

6.1.1. Ծառերի և մշակաբույսերի, դրանց մասերի հանկարծակի կոտրվածքներ կամ վնասում, եթե այն ապահովագրական պատահարի հետևանքով չէ, ներառյալ դրանց փտումը, ծառերի և դրանց մասերի վրա խոնավության, բորբոսի ի հայտ գալը,

6.1.2. ապահովագրված բերքի շուկայական արժեքի տատանման, ֆինանսական ցանկացած կորստի և/կամ վնասի հետևանքով՝ եկամտի կորուստ, հարկեր, տուրքեր, տուգանքներ, վարկային պարտավորություններ,

6.1.3. հալոցքի կամ հորդառատ անձրևների արդյունքում ստորգետնյա ջրերի հետևանքով առաջացած վնասը,

6.1.4. ցանկացած տեսակի աղտոտման, քիմիական կամ այլ կենսաբանական նյութերի հետևանքով առաջացած վնասը,

6.1.5. ծառերի և մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների հետևանքով առաջացած վնասը,

6.1.6. հրդեհի հետևանքով առաջացած վնասը, որի պատճառ է հանդիսացել Ապահովադրի կամ այլ անձի կողմից կրակ վառելը, ներառյալ ապահովագրված բերքը ցրտահարությունից փրկելու նպատակով:

6.2. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ նաև՝

6.2.1. Վնասը, որն առաջացել է ապահովադրի կամ շահառուի դիտավորյալ կատարած գործողությունների հետևանքով,

6.2.2. Պայմանագրում չնշված հողատարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասները,

6.2.3. Պայմանագրի կնքումից առաջ տեղի ունեցած ցանկացած իրադարձությունների և/կամ պատճառների արդյունքում առաջացած վնասները և/կամ կորուստը, եթե նույնիսկ վնասը հայտնաբերվել է Պայմանագրի գործողության ընթացքում,

6.2.4. Սույն պայմաններով չնախատեսված որևէ այլ պատահարի արդյունքում առաջացած վնասները և/կամ կորուստները:

6.3. Ապահովագրողը հատուցման պարտավորություն չի կրում, եթե

6.3.1. ապահովագրության պայմանագիր կնքելիս, Ապահովադիրն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ կեղծ և/կամ ոչ լիարժեք տեղեկություններ է ներկայացրել կամ ապահովագրության օբյեկտի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ է թաքցրել, որոնք կարևոր նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի գնահատման համար,

6.3.2. Պայմանագրում և սույն պայմաններում սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

7.1. Ապահովագրական գումարն Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում:

7.2. Պայմանագրով և սույն պայմաններով նշված ռիսկերից տվյալ մշակաբույսի ապահովագրության համար համապատասխան ապահովագրական գումարները սահմանված են Հավելված 3-ով:

7.3. Պայմանագրում նշված Ապահովագրական գումարն այն առավելագույն գումարն է, որն Ապահովագրողը վճարում է այն բոլոր ապահովագրված պատահարների համար, որոնք տեղի են ունենում Պայմանագրի գործողության ընթացքում:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

8.1. Ապահովագրական սակագինն ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է:

8.2. Ապահովագրավճարը սահմանվում է՝ ելնելով ապահովագրական սակագնից, որն էլ հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրված բերքի տեսակից, գտնվելու վայրից, այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:

8.3. Ապահովագրական սակագինը սահմանվում է ըստ հողատարածքի գտնվելու վայրի ռիսկային գոտիների և հարաբերականության ցուցանիշի՝ համաձայն սույն պայմանների Հավելված 2-ի և Հավելված 4-ի: Ընդ որում, գարնանային ցրտահարության ռիսկից ծիրանի, դեղձի և սալորի ապահովագրության դեպքում Ապահովադրի կողմից Հավելված 2-ի 1-ին կետով նշված աղյուսակի 4-րդ սյունում, 3-րդ կետով նշված աղյուսակի 4-րդ սյունում և 6-րդ կետի 3-րդ աղյուսակում սահմանված սակագների ընտրության դեպքում, Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարը չի կարող գերազանցել ապահովագրական գումարի 50 տոկոսը:

8.4. Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որը սուբսիդավորվում է: Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին ապահովագրավճարի չսուբսիդավորվող մասը:

8.5. Ծիրանի և հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) դեպքում սուբսիդիան կազմում է 40%, իսկ մնացած մշակաբույսերի համար՝ 60%՝ անկախ ընտրված ռիսկերից՝ ներառյալ համակցված ռիսկերը:

8.6. Ապահովադիրն ապահովագրավճարը վճարում է Ապահովագրողին Պայմանագրում նշված չափով և ժամկետում՝ միանվագ կամ տարաժամկետ (տարաժամկետ վճարման դեպքում վճարման նվազագույն չափը և պարբերականությունը որոշվում և Պայմանագրում և/կամ դրան կից լրացուցիչ համաձայնագրում ամրագրվում է Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ), ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

8.7. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման օր է համարվում.

ա) կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի կամ նրա լիազորված անձի կողմից գումարի ստացման օրը,

բ) անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի մուտքագրման օրը:

ԲԱԺԻՆ 9. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

9.1. Չհատուցվող գումարն Ապահովադրի մասնակցության չափն է վնասի հատուցմանը, որը սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:

9.2. Պայմանագրով սահմանվում է 15 տոկոս ոչ պայմանական չհատուցվող գումար՝ ըստ յուրաքանչյուր հողատարածքի, որի չափով Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց: Չհատուցվող գումարը հաշվարկվում է ապահովագրված յուրաքանչյուր հողատարածքի համար սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10.1. ***Ուժը կորցրել է խորհրդի 26/01/2026թ-ի թիվ 01-26Լ որոշմամբ:***

10.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից:

10.3. Պայմանագրին կից կարող են կնքվել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

10.4. Պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողն Ապահովադրի դիմումի հիման վրա վերջինիս տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը: Պայմանագրի առաջին անգամ կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում կրկնօրինակը տրամադրվում է անվճար:

10.5. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

ա) Իրավաբանական անձի դեպքում՝ կազմակերպության տվյալները, հողամասի սեփականության վկայականը կամ վարձակալության պայմանագիրը կամ ՀՀ իրավասու մարմնի կողմից տրամադրվող տեղեկանքը շրջադարձային կոորդինատների գծով կամ իրավական այլ փաստաթղթեր,

բ) Ֆիզիկական անձի դեպքում՝ Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ, հողամասի սեփականության վկայականը կամ վարձակալության պայմանագիրը կամ ՀՀ իրավասու մարմնի կողմից տրամադրվող տեղեկանքը շրջադարձային կոորդինատների գծով կամ իրավական այլ փաստաթղթեր:

10.6. Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը կեղծ կամ սխալ տեղեկություններ է հայտնել, ապա Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը:

10.7. Պայմանագրերի կնքումը մեկնարկում է փետրվարի 15-ին և ավարտվում է՝

ա) «կարկտահարություն և հրդեհ» ռիսկերից խաղողի, ծիրանի, և դեղձի ապահովագրության համար՝ յուրաքանչյուր տարվա մարտի 25-ին, աշնանացան և/կամ գարնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) համար՝ մայիսի 20-ին,

բ) «կարկտահարություն» ռիսկից խնձորի, սալորի, ձմերուկի և սեխի, բալի և կեռասի, կարտոֆիլի ապահովագրության համար՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 31-ին, աշնանացան և/կամ գարնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) համար՝ մայիսի 20-ին,

գ) «գարնանային ցրտահարություն» ռիսկից դեղձի ապահովագրության համար՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին, սալորի համար՝ մարտի 20-ին, խաղողի համար՝ մարտի 25-ին, վաղահաս կարտոֆիլի համար՝ մարտի 10-ին, միջին (միջին-վաղահաս, միջին-ուշահաս), ուշահաս կարտոֆիլի համար՝ մարտի 20-ին, ծիրանի համար՝ մարտի 31-ին,

դ) համակցված ռիսկերից դեղձի ապահովագրության համար՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին, սալորի համար՝ մարտի 20-ին, խաղողի համար՝ մարտի 25-ին, վաղահաս կարտոֆիլի համար՝ մարտի 10-ին, միջին (միջին-վաղահաս, միջին-ուշահաս), ուշահաս կարտոֆիլի համար՝ մարտի 20-ին, աշնանացան և/կամ գարնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) համար՝ մայիսի 20-ին, ծիրանի համար՝ մարտի 25-ին,

ե) «երաշտ» ռիսկից հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության համար՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 31-ին:

10.7.1. Ապահովագրության գործողության ժամկետներն ըստ յուրաքանչյուր մշակաբույսի և ապահովագրվող ռիսկի սահմանվում են հետևյալ աղյուսակով.

Հաստատված է
«Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» ՀԿ
խորհրդի 17/09/2019թ-ի թիվ 19/01Լ որոշմամբ

Սույն պայմանները խմբագրվել է «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» ՀԿ
խորհրդի՝ 30/01/2020թ-ի թիվ 03-20Լ, 15/01/2021թ-ի թիվ 01Լ, 15/04/2021թ-ի թիվ 02-21Լ, 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ, 31/03/2022թ-ի թիվ 02-22Լ, 27/01/2023թ-ի թիվ 01-23Լ, 29/02/2024թ-ի թիվ 01-24Լ, 17/04/2024թ-ի թիվ 03-24Լ, 14/03/2025թ-ի թիվ 02-25Լ, 26/01/2026թ.թիվ 01-26Լ և 05/03/2026թ. թիվ 02-26Լ որոշումներով

Բերք	Առանձնահատկություններ	Ապահովագրական ժամանակաշրջան[1,2,3,4]
Ծիրան[1, 2]		Մարտի 1 – Օգոստոսի 25 (գարնանային ցրտահարություն)
		Մարտի 1 – Օգոստոսի 25 (կարկուտ և հրդեհ + գարնանային ցրտահարություն)[5]
		Ապրիլի 1 – Օգոստոսի 25 (կարկուտ և հրդեհ)
Խաղող[2]	տեխնիկական, սեղանի և համապիտանի սորտեր	Մարտի 1 – Հոկտեմբերի 30 (գարնանային ցրտահարություն)
		Մարտի 1 – Հոկտեմբերի 30 (կարկուտ և հրդեհ +

[1] Ծիրանի ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Գեղարքունիքի մարզի համար սահմանվում է սեպտեմբերի 30-ը:

[2] Փետրվարի 21-ից մինչև փետրվարի 27-ը գարնանային ցրտահարության ռիսկից ծիրանի, խաղողի և դեղձի ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման ամսաթվին հաջորդող 10-րդ օրը, մարտի 6-ից մինչև մարտի 15-ը գարնանային ցրտահարության ռիսկից դեղձի, մարտի 6-ից մինչև մարտի 25-ը գարնանային ցրտահարության ռիսկից խաղողի, մարտի 6-ից մինչև մարտի 31-ը գարնանային ցրտահարության ռիսկից ծիրանի ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման ամսաթվին հաջորդող 10-րդ օրը, փետրվարի 15-ից մինչև մարտի 5-ը գարնանային ցրտահարության ռիսկից սալորի ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապրիլի 1-ին, մարտի 6-ից մինչև մարտի 20-ը գարնանային ցրտահարության ռիսկից սալորի ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման ամսաթվին հաջորդող 10-րդ օրը, ապրիլի 25-ից մինչև մայիսի 20-ը կարկտահարության ռիսկից ձմերուկի և սեխի, մայիսի 15-ից մայիսի 31-ը կարկտահարության ռիսկից միջին-վաղահաս, միջին ուշահաս կամ ուշահաս կարտոֆիլի, ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման ամսաթվին հաջորդող 10-րդ օրը:

[3] Մարտի 21-ից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում կարկտահարության և/կամ գարնանային ցրտահարության ռիսկերից միջին-վաղահաս, միջին ուշահաս կամ ուշահաս կարտոֆիլի ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման ամսաթվին հաջորդող 10-րդ օրը (կարտոֆիլի դեպքում՝ բայց ոչ ավելի վաղ, քան սածիլների առաջացման փուլը):

[4] Ապրիլի 1-ից մինչև մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում կարկտահարության կամ կարկտահարության և հրդեհի ռիսկերից հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման ամսաթվին հաջորդող 6-րդ օրը:

Մայիսի 1-ից մինչև մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում երաշտի ռիսկից հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) ապահովագրության պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ պայմանագիրն ուժի մեջ է մտնում հունիսի 1-ից:

[5] Պայմանագրի գործողության ժամկետը համակցված ռիսկերի համար սահմանված է Մարտի 1 – Օգոստոս 25, հաշվի առնելով, որ կարկուտ և հրդեհ ռիսկի համար սահմանվում է գործողության ժամկետ Ապրիլի 1 – Օգոստոս 25, գարնանային ցրտահարության համար՝ Մարտի 1 – Օգոստոս 25:

			գարնանային ցրտահարություն)[6]
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 30 (կարկուտ և հրդեհ)
Դեղձ[2]			Մարտի 1 – Հոկտեմբերի 10 (գարնանային ցրտահարություն)
			Մարտի 1 – Հոկտեմբերի 10 (կարկուտ և հրդեհ + գարնանային ցրտահարություն)[7]
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 10 (Կարկուտ և հրդեհ)
Խնձոր			Մայիսի 1 – Հոկտեմբերի 10 (կարկուտ)
Հացահատիկային մշակաբույսեր[4] **(ցորեն/գարի/վարսակ)**	Գարնանացան	Ոռոգվող դաշտեր	Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ)
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ և հրդեհ)
		Չոռոգվող դաշտեր	Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ)
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ և հրդեհ)
			Մայիսի 1* – Հոկտեմբերի 1 (երաշտ)
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1

[6] Պայմանագրի գործողության ժամկետը համակցված ռիսկերի համար սահմանված է Մարտի 1 – Հոկտեմբեր 30, հաշվի առնելով, որ կարկուտ և հրդեհ ռիսկի համար սահմանվում է գործողության ժամկետ Ապրիլի 1 – Հոկտեմբեր 30, գարնանային ցրտահարության համար՝ Մարտի 1 – Հոկտեմբեր 30:

[7] Պայմանագրի գործողության ժամկետը համակցված ռիսկերի համար սահմանված է Մարտի 1 – Հոկտեմբեր 10, հաշվի առնելով, որ կարկուտ և հրդեհ ռիսկի համար սահմանվում է գործողության ժամկետ Ապրիլի 1 – Հոկտեմբեր 10, գարնանային ցրտահարության համար՝ Մարտի 1 – Հոկտեմբեր 10:

[8] Պայմանագրի գործողության ժամկետը համակցված ռիսկերի համար սահմանված է Ապրիլի 1 – Հոկտեմբեր 1, հաշվի առնելով, որ երաշտ ռիսկի համար սահմանվում է գործողության ժամկետ գարնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) դեպքում՝ Մայիսի 1 – Հոկտեմբերի 1 և աշնանացան հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ) դեպքում՝ Մայիսի 1 – Սեպտեմբերի 1, իսկ կարկուտ, կարկուտ և հրդեհ ռիսկերի համար՝ Ապրիլի 1 – Հոկտեմբեր 1:

			(երաշտ + կարկուտ) [8]
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (երաշտ + կարկուտ և հրդեհ) [8]
	Աշնանացան	Ոռոգվող դաշտեր	Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ)
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ և հրդեհ)
		Չոռոգվող դաշտեր	Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ)
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (կարկուտ և հրդեհ)
			Մայիսի 1 – Սեպտեմբերի 1 (երաշտ)
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (երաշտ + կարկուտ) [8]
			Ապրիլի 1 – Հոկտեմբերի 1 (երաշտ + կարկուտ և հրդեհ) [8]
Սալոր[2]			Մարտի 16 – Սեպտեմբերի 1 (գարնանային ցրտահարություն)
			Մարտի 16 – Սեպտեմբերի 1 (կարկուտ + գարնանային ցրտահարություն)
			Ապրիլի 1 – Սեպտեմբերի 1 (կարկուտ)
Ձմերուկ և սեխ[2]			Մայիսի 1* – Հոկտեմբերի 1 (կարկուտ)
Կարտոֆիլ[2, 3]	Վաղահաս		Մարտի 20** – Օգոստոսի 1 (կարկուտ)
			Մարտի 20** – Օգոստոսի 1 (գարնանային ցրտահարություն)

		Մարտի 20** – Օգոստոսի 1 (կարկուտ + գարնանային ցրտահարություն)
	Միջահաս, միջավաղահաս, միջաուշահաս և ուշահաս	Ապրիլի 1** – Հոկտեմբերի 1 (կարկուտ)
		Ապրիլի 1** – Հոկտեմբերի 1 (գարնանային ցրտահարություն)
		Ապրիլի 1** – Հոկտեմբերի 1 (կարկուտ + գարնանային ցրտահարություն)
Բալ և կեռաս (բոլոր տեսակները և նրանց հիբրիդները)	Վաղահաս և միջահաս	Մայիսի 1*** – Հուլիսի 1
	Ուշահաս	Մայիսի 1*** – Սեպտեմբերի 1

* *Բայց ոչ ավելի շուտ, քան ծլելու շրջանը:*
** *Բայց ոչ ավելի շուտ, քան սածիլների առաջացման փուլը:*
*** *Բայց ոչ ավելի շուտ, քան պտղի սկզբնավորման և (կամ) ձևավորման փուլը:*

10.8. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով՝ ըստ ռիսկերի և ապահովագրվող բերքի տեսակի:

10.9. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և գործում է Պայմանագրով սահմանված ժամկետում: Ընդ որում, Պայմանագիրը և սույն պայմանները տարածվում են Պայմանագրի նաև վերջին երկու օրը տեղի ունեցած ապահովագրական պատահարների վրա, որոնց մասին տեղեկացումն Ապահովագրողին տեղի է ունեցել Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո:

10.10. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրությունը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել՝

ա) Պայմանագրում որպես ապահովագրության գործողության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի 00 ժամ 00 րոպեից,

բ) մինչև Պայմանագրում նշված ապահովագրության գործողության ժամկետի ավարտի ամսաթվի 23 ժամ 59 րոպե:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. *Ապահովագրողը պարտավոր է.*

11.1.1. Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին, ընթացակարգերին, ուղեցույցներին:

11.1.2. Ապահովադրի վերաբերյալ ապահովագրական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, ներառյալ անձնական տվյալները և Ապահովադրի ֆինանսական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը չհրապարակել, չբացահայտել կամ այլ կերպ երրորդ անձանց չտրամադրել՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված դեպքերի:

11.1.3. Պահպանել և կատարել սույն պայմաններով ու Պայմանագրով սահմանված պայմաններն ու դրույթները:

11.1.4. Տրամադրել 10 տոկոս զեղչ ապահովագրավճարից՝ համակցված ռիսկերից ապահովագրություն ձեռք բերելու դեպքում:

11.1.5. Սույն պայմանների 11.3.8-րդ կետով սահմանված տեղեկացումից հետո՝ Ապահովագրողի կողմից Ապահովադրի հետ համաձայնեցված ժամկետում, իրականացնել բերքի ուսումնասիրություն և/կամ վնասի գնահատում:

11.1.6. Պայմանագրի և սույն պայմանների համաձայն՝ ապահովել ապահովագրական հատուցման վճարումն ապահովագրական պատահարի առաջացման դեպքում:

11.1.7. Ապահովագրական հատուցման վճարման մերժման դեպքում որոշման հիման վրա Ապահովադրին գրավոր տեղեկացնել մերժման հիմքերի մասին սույն պայմաններով նախատեսված ժամկետներում:

11.2. *Ապահովագրողն իրավունք ունի.*

11.2.1. Ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկատվությունը և ապահովագրված հողատարածքի դիտարկումներ իրականացնել Պայմանագրի ամբողջ գործողության ընթացքում:

11.2.2. Անցկացնել հողատարածքի նախնական ուսումնասիրություն՝ ստուգելու հողատարածքի վիճակը՝ նախքան Պայմանագրի կնքումը:

11.2.3. Լիազորել վնաս գնահատողին Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված բերքի դիտարկում կատարել և իրականացնել վնասների գնահատում:

11.2.4. Ստուգել հողատարածքի համապատասխանությունը Պայմանագրի դրույթներին ու պայմաններին, ինչպես նաև՝ Պայմանագրի գործողության ընթացքում ստուգել ապահովագրված բերքի վիճակը:

11.2.5. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

11.2.6. Ապահովադրից, անհրաժեշտության դեպքում, պահանջել և ստանալ ապահովագրական պատահարը հավաստելու և հատուցման վճարի հաշվարկի համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն:

11.2.7. Մերժել ապահովագրական հատուցումը, եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը խախտել է Պայմանագրի և/կամ սույն պայմանների դրույթներն ու պայմանները:

11.2.8. Մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրն Ապահովագրողին ապահովագրական պատահարի վերաբերյալ հայտնել է կեղծ, ակնհայտ սխալ տեղեկություններ:

11.2.9. Վաղաժամկետ միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ապահովադիրը տրամադրել է կեղծ տեղեկություններ, իրականացրել է խարդախություններ՝ կապված ապահովագրական հատուցում ստանալու հետ:

11.2.10. Դադարեցնել Պայմանագիրը՝ համաձայն սույն պայմանների 16-րդ բաժնի:

11.3. *Ապահովադիրը պարտավոր է.*

11.3.1. Կատարել Պայմանագրով և սույն պայմաններով սահմանված դրույթները,

11.3.2. Ապահովագրողին տրամադրել ռիսկի գնահատման վերաբերյալ ողջ հասանելի տեղեկատվությունը:

11.3.3. Ապահովագրել նույն համայնքում գտնվող բոլոր այն հողատարածքները, որոնք Ապահովադիրն օրինական կերպով շահագործում և/կամ տիրապետում (վարձակալում) է, և որոնք համապատասխանում են սույն Պայմանների պահանջներին: Ընդ որում՝ Ապահովադիրը կարող է հողատարածքներն ապահովագրել մեկ կամ մի քանի Ապահովագրողի մոտ: Սույն պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը:

11.3.4. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրված բերքի վիճակի փոփոխությունների մասին:

11.3.5. Կատարել ապահովագրավճարի վճարում՝ Պայմանագրում և սույն պայմաններում սահմանված չափով և ժամկետում:

11.3.6. Վնասի գնահատման նպատակով ներկա գտնվել հողատարածքի ստուգմանը և ստորագրել վնասի ուսումնասիրման (զննության) ակտը:

11.3.7. Նախքան Պայմանագրի կնքումը կամ Պայմանագրի գործողության ողջ ընթացքում և պատահարի տեղի ունենալուց հետո Ապահովագրողին և/կամ նրա լիազոր ներկայացուցչին թույլատրել իրականացնել հողատարածքի և մշակաբույսի ուսումնասիրություն:

11.3.8. Ապահովագրված բերքի մասնակի վնասված լինելու դեպքում բերքահավաքի ժամանակահատվածի սկզբում, ոչ ուշ, քան առաջին բերքահավաքից 15 օր առաջ, իսկ առաջին բերքավաքից հետո ապահովագրական ռիսկի տեղի ունենալու դեպքում՝ մասնակի բերքահավաքից 5 օր առաջ տեղեկացնել Ապահովագրողին, որպեսզի վերջինս բերքի ուսումնասիրություն իրականացնելու հնարավորություն ունենա:

11.3.9. Վնասված բերքը մինչև վնասի գնահատումը պահել ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վիճակում, եթե վնասի նվազեցման որևէ միջոցառում անհրաժեշտ չէ, որը համաձայնեցվում է Ապահովագրողի հետ:

11.3.10. Հրդեհի դեպքում անհապաղ դիմել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «911» ծառայությանը:

11.3.11. Ապահովագրական պատահարի մասին անհապաղ (սակայն ոչ ուշ, քան ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 5 օրվա ընթացքում) Պայմանագրով սահմանված կարգով տեղեկացնել Ապահովագրողին:

11.3.12. Ապահովագրողին տրամադրել ողջ տեղեկատվությունը, ներառյալ՝ պատահարի տեղի ունենալու դեպքում հողատարածքում իրականացված աշխատանքների վերաբերյալ:

11.3.13. Ապահովագրողին հայտնել ապահովագրության օբյեկտի վերաբերյալ, ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին:

11.3.14. Ինչպես Պայմանագրի կնքման, այնպես էլ Պայմանագրի գործողության ընթացքում գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրողին այլ ապահովագրողի հետ ապահովագրված հողատարածքի գծով կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերի մասին: Միևնույն ժամանակ, Ապահովադիրը պարտավոր է նշել այլ ապահովագրական ընկերությունների անվանումները, նրանց մոտ ապահովագրված բերքի հողատարածքները, ապահովագրական ռիսկերը, ապահովագրական գումարների չափերը և գործող ապահովագրության պայմանագրերի ժամկետները: Ընդ որում, Պայմանագրով սահմանված հողատարածքը, որն ապահովագրվել է սույն պայմաններով

(սուբսիդավորմամբ) չի կարող նույն ժամանակահատվածում միևնույն ռիսկից ունենալ սույն պայմաններով մեկից ավել Պայմանագիր: Եթե ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի Պայմանագրով սահմանված ամբողջ ապահովագրական գումարի չափով կամ ապահովագրական գումարից փոքր կամ մեծ ապահովագրական գումարով այլ ապահովագրության պայմանագիր, որով հատուցվում է նույն վնասը, ապա տրվող հատուցումների հանրագումարը չի կարող գերազանցել Ապահովադրի փաստացի կրած վնասը:

11.4. *Ապահովադիրն իրավունք ունի.*

11.4.1. ծանոթանալ Պայմանագրի դրույթներին, սույն պայմաններին, գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ ուղեցույցներին, ընթացակարգերին:
11.4.2. Ստանալ Պայմանագրի և սույն պայմանների մեկական օրինակները:
11.4.3. Պայմանագրի և սույն պայմանների դրույթների համաձայն՝ պահանջել և ստանալ հատուցում ապահովագրական պատահարի առաջացման դեպքում:
11.4.4. Սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
11.4.5. Օգտվել Ապահովագրողի կողմից սահմանված զեղչից՝ համակցված ռիսկերից ապահովագրության դեպքում:
11.4.6. Վնասի չափի անհամաձայնության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ներկայացնել բողոք-պահանջ:
11.4.7. Ստանալ Պայմանագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ բնօրինակը կորցնելու կամ վնասվելու դեպքում:

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը կամ շահառուն/լիազորված անձը կամ այլ շահագրգիռ անձ պարտավոր է պատահարի մասին անհապաղ (սակայն ոչ ուշ, քան ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 5 օրվա ընթացքում) տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրում նշված կոնտակտային տվյալներով՝ հեռախոսահամարներով, էլեկտրոնային փոստով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Ապահովագրողին

ներկայացնել ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում՝ նշելով պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև սույն պայմանների 13.2-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

12.2. Կարկտահարության և հրդեհի հետևանքով տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին տեղեկացումից հետո, իսկ գարնանային ցրտահարության և երաշտի հետևանքով տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին տեղեկացումից հետո՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հիդրոմետ ծառայության կողմից տրամադրված տեղեկատվությունը, Ապահովագրողը 2 աշխատանքային օրվա ընթացքում պետք է նշանակի վնասը գնահատող փորձագետ՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և/կամ վնասի չափը որոշելու համար: Վնասը գնահատող փորձագետի եզրակացության հիման վրա որոշվում է ապահովագրական հատուցման չափը:

12.3. Հողատարածքում վնասի գնահատումը պետք է իրականացվի ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվանից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 15 օրացուցային օրվա ընթացքում:

12.4. Կախված ապահովագրված բերքի տեսակից և վնասի չափերից՝ վնասը գնահատողը վնասի գնահատման նպատակով կարող է մի քանի այցելություն կատարել հողատարածք, այդ թվում տարբեր ժամանակահատվածներում՝ համաձայն Գործակալության կողմից հաստատված վնասի գնահատման մեթոդաբանության, ուղեցույցների:

12.5. Վնասի գնահատման գործընթացներն իրականացվում են համաձայն Գործակալության կողմից հաստատված վնասի գնահատման մեթոդաբանության, ուղեցույցների:

12.6. Հողատարածք այցելությունից հետո վնաս գնահատողն Ապահովադրին պետք է ծանոթացնի վնասի գնահատման համապատասխան մեթոդների հետ:

12.7. Ապահովագրված բերքի ուսումնասիրության արդյունքում վնաս գնահատողը պետք է լրացնի վնասների ուսումնասիրման (զննության) համապատասխան ակտը, որը ստորագրվում է վնաս գնահատողի և Ապահովադրի (կամ նրա ներկայացուցչի) կողմից, որի մեկ օրինակը տրամադրվում է Ապահովադրին (կամ նրա ներկայացուցչին):

ԲԱԺԻՆ 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը: Ընդ որում՝

ապահովագրական հատուցումն առաջին հերթին կատարվում է Պայմանագրի հիման վրա և սույն պայմանների համաձայն՝ անկախ Ապահովադրի՝ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված ապահովագրության դասերով ապահովագրության այլ պայմանագիր ունենալու հանգամանքից:

13.2. Ապահովադիրն ապահովագրական հատուցման ստացման համար սույն պայմանների 12.1-րդ կետով սահմանված ժամկետում Ապահովագրողին է ներկայացնում դիմում, Ապահովադրի կամ Շահառուի բանկային տվյալները՝ հատուցումը փոխանցումով ստանալու դեպքում:

13.3. Ապահովագրված բերքի վնասի/կորստի դեպքում վնաս գնահատողը հողատարածք վերջին այցելությունից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և Ապահովագրողին է ծանուցում վնասի գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

13.4. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.5. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.6. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.7. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.8. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.9. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.10. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.11. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.12. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.13. ***Ուժը կորցրել է խորհրդի 25/01/2022թ-ի թիվ 01-22Լ որոշմամբ:***

13.14. Ապահովագրողը սույն պայմանների 13.3.-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու (պատճառաբանելով հիմքերը) մասին, և 1 աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին (ներառյալ փորձագետի կողմից կազմված վնասի չափի գնահատման վերաբերյալ եզրակացությունը) ծանուցում է Ապահովադրին: Եթե առկա է ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշում, Ապահովագրողն ապահովագրական հատուցման որոշման ծանուցումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին է վճարում հատուցման գումարը:

13.15. Սույն պայմանների 13.14.-րդ կետով սահմանված հատուցման վճարման ժամկետը չպահպանելու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին վճարում է հատուցման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով տույժ՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար: Ընդ որում, ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի դրամարկղից կատարված վճարման

օրը կամ Ապահովագրողի բանկային հաշվից ապահովագրական հատուցման գումարի դուրս գրման օրը: Սույն պայմանների 11.1.5-րդ կետով սահմանված պարտավորությունը չկատարելու, այն է՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնեցված ժամկետն Ապահովագրողի կողմից չպահպանելու և դրա արդյունքում Ապահովադրին ապահովագրական հատուցում ստանալու հնարավորությունից զրկելու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրին վճարում է տույժ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 100 տոկոսի չափով՝ նվազեցված ֆրանշիզան:

13.16. Եթե վնասի գնահատման արդյունքների հիման վրա պարզվում է, որ տեղի է ունեցել ապահովագրված բերքի (բացառությամբ՝ խաղողի) ամբողջական կորուստ, ապա ապահովագրական հատուցման գործընթացն իրականացվում է սույն բաժնի 13.2.-րդ-13.15.-րդ կետերով սահմանված կարգով:

13.17. Եթե վնասի գնահատման արդյունքների հիման վրա պարզվում է, որ տեղի է ունեցել ապահովագրված բերքի մասնակի վնաս, ապա ապահովագրական հատուցման գործընթացն իրականացվում է սույն պայմանների 12.5.-րդ կետով սահմանված կարգով բերքահավաքից առաջ իրականացվող փորձաքննությունից հետո՝ սույն պայմանների 13-րդ բաժնով սահմանված կարգով: Խաղողի ամբողջական կորստի դեպքում ապահովագրական հատուցման վճարման կարգն իրականացվում է՝ համաձայն ապահովագրված բերքի մասնակի կորստի դեպքում ապահովագրական հատուցման վճարման կարգի:

ԲԱԺԻՆ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ

14.1. Ապահովագրողը կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ դեպքերում՝

14.1.1. Ապահովադիրը պահանջված ժամկետում Ապահովագրողին չի տեղեկացրել ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին և/կամ խոչընդոտել է Ապահովագրողի (նրա ներկայացուցչի), վնաս գնահատողի մուտքը հողատարածք,

14.1.2. Ապահովադիրը կանխամտածված կերպով ապատեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրության օբյեկտի կամ ռիսկի վերաբերյալ,

14.1.3. Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը կեղծ կամ սխալ տեղեկություններ է հայտնել,

14.1.4. Անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում ապահովագրության օբյեկտին պատճառվել են վնասներ,

14.1.5. Հողատարածքը չի համապատասխանել Պայմանագրով նախատեսված դրույթներին,

14.1.6. Սույն պայմանների 6-րդ բաժնում նշված պատահարների արդյունքում առաջացած վնասները,

14.1.7. Ապահովադիրը խախտել է Պայմանագրի էական պայմանները:

14.2. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների վերաբերյալ պայմանագրի ժամկետի ավարտից 5 և ավել օր հետո ներկայացված պահանջները և կամ դիմումները ենթակա չեն հատուցման՝ անկախ դրանց առաջանալու կամ հայտնաբերվելու հիմքերից՝ ներառյալ այն դեպքերում, երբ վնասի փաստը հաստատվել է ծանուցման ստացման պահին:

14.3. Եթե ապահովագրական պատահար ստանալուց հետո և կամ հայցը կարգավորելու ընթացքում պարզվի, որ Ապահովադիրը չի կատարել իր՝ Պայմանների 11.3.3 կետում սահմանված պարտականությունները:

14.4. Ապահովագրողն Ապահովադրին Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում պետք է գրավոր ծանուցի ապահովագրական հատուցման կամ մերժման մասին՝ պատճառաբանելով մերժման հիմքերը:

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

15.1. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

15.2. Անհամաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Գործակալության կողմից, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.3. Վեճերի առաջացման դեպքում սույն պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 16. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16.1. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝

ա) Ապահովադրի, եթե իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում,

բ) պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում,

դ) Ապահովադրի կողմից ապահովագրավճարի չվճարման դեպքում,

ե) ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

16.2. Ապահովագրության պայմանագրի բոլոր փոփոխությունները իրականացվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ՝ կողմերից որևէ մեկի գրավոր ծանուցման հիման վրա, ծանուցագիրը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Փոփոխությունները կատարվում են համաձայնագիր կնքելու միջոցով, որը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

16.3. Պայմանագիրը դադարում է.

16.3.1. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի դեպքում,

16.3.2. Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը սպառվելու դեպքում,

16.3.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

16.4. Պայմանագիրը կարող է Ապահովագրողի կողմից վաղաժամկետ լուծվել՝

16.4.1. Ապահովադրի կողմից սույն պայմանների խախտման դեպքում, որի ժամանակ Ապահովադրին է վերադարձվում Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ նվազեցնելով այն 15 տոկոսի չափով և այդ պահին վճարված կամ վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափով,

16.4.2. Ապահովադրի կողմից կեղծ, ակնհայտ սխալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում, որի ժամանակ ապահովագրավճարները Ապահովադրին վերադարձման ենթակա չեն, բացառությամբ ապահովագրավճարների սուբսիդավորվող մասի, որը վերադարձվում է սուբսիդավորող համապատասխան պետական մարմնին:

16.5. Սույն պայմանների 16.4.1-րդ, 16.7-րդ և 16.8-րդ կետերով նախատեսված Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքերում Ապահովադրին վերադարձվող ապահովագրավճարը տարանջատվում է ըստ Ապահովադրի

կողմից վճարվելիքի և սուբսիդավորվողի, ինչպես նաև վերադարձը կատարվում է համապատասխանաբար Ապահովադրին և ապահովագրավճարը սուբսիդավորող համապատասխան պետական մարմնին:

16.6. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին, եթե այլ ժամկետ նախատեսված չէ Պայմանագրով:

16.7. Ապահովադրի կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում է իր կողմից վճարված ապահովագրավճարը Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ նվազեցնելով այդ պահին վճարված կամ վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափով: Իսկ ապահովագրավճարը սուբսիդավորող համապատասխան պետական մարմնին տվյալ դեպքում վերադարձվում է Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի սուբսիդավորված մասը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

16.8. Ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում միակողմանիորեն լուծելու դեպքում, Պայմանագրի լուծումն իրականացվում է համաձայն Օրենքի 81-րդ հոդվածի 5.1-րդ կետի: Այդ դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված Ապահովադրի կողմից Պայմանագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից: Սույն կետով նշված Պայմանագրի միակողմանի լուծման դեպքում Ապահովագրողը պարտավոր է Ապահովադրին համամասնական կարգով վերադարձնել Պայմանագրի գործողության մնացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը: Պայմանագրի հետ կապված որևէ այլ վճար Ապահովադրից չի կարող պահանջվել, բացառությամբ Պայմանագրի հետ կապված կատարած փաստացի ծախսերի, որոնք չեն կարող գերազանցել ապահովագրավճարի 15 տոկոսը:

16.9. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում վերադարձման ենթակա ապահովագրավճարն Ապահովադրին է վերադարձվում Պայմանագրի դադարեցման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

16.10. Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը:

16.11. Պայմանագիրն առ ոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

ԲԱԺԻՆ 17. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

17.1. Երբ Ապահովադիրը մեկ այլ անձից (ՀՀ քաղաքացիներից, օտարերկրյա պետությունների քաղաքացիներից, քաղաքացիություն չունեցող անձանցից, իրավաբանական անձանցից, ինչպես նաև ՀՀ պետական մարմիններից) ստանում է վնասի հատուցումը, Ապահովագրողը վճարում է միայն ամբողջ վնասի գումարի և մեկ այլ անձի(անձանց) կողմից վճարված վնասի գումարի միջև եղած տարբերությունը:

17.2. Ապահովագրված հողատարածքի նկատմամբ իրավունքների՝ այն անձից, ում օգտին կնքվել է Պայմանագիրը, այլ անձի փոխանցման դեպքում, այդ Պայմանագրով իրավունքները և պարտականություններն անցնում են այն անձին, ում անցել են հողատարածքի նկատմամբ իրավունքները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողատարածքի բռնագանձման կամ բռնագրավման արդյունքում սեփականատիրոջ փոփոխման դեպքերի:

17.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում հողատարածքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքը փոխանցվում է այլ անձի, ապա այդ անձը պետք է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնի Ապահովագրողին: Պայմանագրով իրավունքներն ու պարտականությունները նոր սեփականատիրոջն են անցնում Ապահովագրողի համաձայնության դեպքում համաձայնագիր կնքելու միջոցով:

ԲԱԺԻՆ 18. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ/ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

18.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Պայմանագրի կողմերը չէին կարող կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների որոշումները և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

18.2. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել

Պայմանագրի այն կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչընդոտում նման ազդեցությունը:

18.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ԲԱԺԻՆ 19. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

19.1. Սույն պայմաններով սահմանված ծանուցումը պետք է իրականացվի ստորև նշված եղանակներից որևէ մեկով՝

19.1.1. ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով՝ ստացման մասին ստորագրությամբ, կամ

19.1.2. ծանուցումը համապատասխան անձի կողմից գրավոր տրամադրած էլեկտրոնային հասցեին հետպատասխան տեղեկացմամբ ուղարկելու միջոցով, իսկ Պայմանագրի կնքումից հետո Ապահովադրի կողմից Ապահովագրողին (Գործակալությանը) այլ էլեկտրոնային հասցե տրամադրած լինելու դեպքում՝ վերջին անգամ գրավոր տրամադրված էլեկտրոնային հասցեին հետպատասխան տեղեկացմամբ ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե ծանուցումն իրականացնողը ծանուցումն ուղարկելուց հետո մեկ օրվա ընթացքում ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացում չի ստանում, ապա պարտավոր է դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում ծանուցվող անձին հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել ծանուցման տեղադրման մասին, կամ

19.1.3. պատվիրված նամակ ուղարկելու միջոցով՝ հետպատասխան տեղեկացմամբ, կամ

19.1.4. ծանուցումը տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրելու միջոցով՝ պայմանով, որ ծանուցումն իրականացնողը տվյալ անձին նախապես գրավոր ձևով հայտնել է ինտերնետային կայքի հասցեն, տվյալ անձի համար ստեղծված բաժին մուտք գործելու համար անհրաժեշտ մուտքային տվյալները և բաժնից օգտվելու կարգը: Ընդ որում, եթե ծանուցումն իրականացնողը ծանուցումը տեղադրելուց հետո մեկ օրվա ընթացքում ծանուցման ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացում չի ստանում, ապա պարտավոր է դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում ծանուցվող անձին

հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել ծանուցման տեղադրման մասին, կամ

19.1.5. բջջային հաղորդագրության միջոցով:

19.2. Սույն պայմաններով նախատեսված կարգով ծանուցումներն անձի կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել՝

19.2.1. էլեկտրոնային փոստով ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից,

19.2.2. ծանուցումն ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

19.2.3. պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձվելու հաջորդող օրվանից,

19.2.4. ծանուցումը տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրվելու դեպքում՝

ա) ծանուցումն ընթերցելուն հաջորդող օրվանից, եթե ծանուցումը տեղադրելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, ստացվել է ծանուցման ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացում,

բ) ծանուցող անձի կողմից հեռախոսազանգով տեղեկացնելու օրվան հաջորդող օրվանից, եթե ծանուցումը տեղադրելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, ծանուցող անձը չի ստանում ծանուցման ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացում և ծանուցվող անձին հեռախոսազանգի միջոցով է տեղեկացնում ծանուցման վերաբերյալ,

19.2.5. բջջային հաղորդագրություն ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից: